Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2012 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2012 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիներից ստացվել է 1237 նամակ, որից 1216-ը՝ աջակցության խնդրանքով, 11-ը՝ բողոք, 5-ը՝ առաջարկություն, 5-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 90 դիմումներից 81-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 9 դիմումներից 7-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 91 դիմումներից դրական լուծում է ստացել 23-ը, 42 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու նպատակով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 40 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 586 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 324 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 173 քաղաքացիներից բավարարվել է 161-ի խնդրանքը, 39 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 39 հոգու՝ առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2012թվականի առաջին եռամսյակում կատարվել է 282 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2012թ.1-ին կիսամյակ/

1. Ստացվել են նամակներ ընդամենը	584	653	1237
որից՝	1- ին եռամս.	2-րդ եռամս.	1-ին կիսամ.
աջակցություն	571	645	1216
առաջարկություն	3	2	5
հարցում	3	2	5
բողոք	7	4	11
այդ թվում՝			
կրկնակի	3	2	5
կոլեկտիվ	4	3	7
3. Ըստ հարցի բնույթի՝			
բնակարանային	13	15	28
կոմունալ-կենցաղային	14	16	40
շինարարական	9	13	22
արդձեռ/տրանսկապ/	-	3	3
գյուղատնտեսական	2	3	5
բնութ. պահպանութ.	1	1	2
առևտրի	-	-	-
կենսաթոշակի և նպաստի	9	8	17
առողջապահության	102	206	308
կրթական և մանկ.հիմն	42	9	51
գիտութ.կուլտուրա	2	7	9
ֆինանսական	311	275	586
օրենսդրական	-	2	2
քաղ. և որդեգրման	6	2	8
աշխ.տեղ և հաշվառման	46	45	91
հողհատկացում և հողօգտ.	7	2	9
ապարատային	8	22	20
այլ հարցեր	12	24	36